Մ. Սարյան
«Հայաստան» պանո, 1964թ.

ՄԵՆՔ ՔՈ ԸՆԿԵՐՆ ԵՆՔ



ազատություն
արդարություն
դաշնակցություն

Հայ Յեղափոխական Դաշնակցություն

Նախընտրական հռչակագիր





Հայ Յեղափոխական Դաշնակցությունը՝

իբրև ազգային, ժողովրդավար, սոցիալիստական և հեղափոխական կուսակցություն, մշտապես պայքարել է հայ մարդու և հայության քաղաքական, տնտեսական, սոցիալ-մշակութային շահերի համար:

Հայաստանի առջև ծառացած արտաքին և ներքին մարտահրավերները այսօր պահանջում են ծանրակշիռ և լայնամասշտաբ համակարգային փոփոխություններ:

ՄԵՆՔ ՔՈ ԸՆԿԵՐՆ ԵՆՔ

Մայիս 2012

Հայ Յեղափոխական Դաշնակցությունը՝

կազմակերպված է,
ունի կամք և վճռականություն՝
առաջնորդելու մեր ժողովրդի երթը
դեպի Նոր Հայաստան, Ազատ, Արդար,
Բարեկեցիկ հասարակություն:

Մենք հավատում ենք
Արդար երկրի և Ազատ քաղաքացու
ստեղծագործ ուժին:

Սա է Հզոր Հայաստան կերտելու,
հպարտ քաղաքացի ունենալու գրավականը:

Մենք վճռական ենք:
Մեզ անհրաժեշտ է Ձեր քվեն ու վստահությունը:

2012-2017 թվականների մեր առաջնահերթություններն են.

Վերացնել չքավորությունը, ձևավորել միջին խավ, երաշխավորել բարեկեցիկ կյանք

■ Աղքատության շեմ կհամարվի կենսապահովման նվազագույն բյուջեի մեծությունը, կերաշխավորվի յուրաքանչյուր քաղաքացու՝ դրանից ոչ ցածր եկամուտ ունենալու իրավունքը: Մարդավայել կենսաթոշակ կտրվի յուրաքանչյուր թոշակառուի, արժանապատիվ վարձատրություն կսահմանվի բոլոր աշխատողների համար (ներկա ցուցանիշներով միջին կենսաթոշակը կլինի 63.000 դրամ (այժմ 31.255 դրամ է), նվազագույն ժամային աշխատավարձը կլինի 400 դրամից ոչ պակաս (այժմ 196 դրամ է), արժանավայել պայմաններ կապահովվեն սահմանափակ կարողություններով անձանց համար,

■ կկրկնապատկվի ՀՆԱ-ն, կեռապատկվի պետական բյուջեն, կստեղծվի շուրջ 200 հազար նոր աշխատատեղ, յուրաքանչյուր աշխատունակ մարդու կտրվի աշխատանքի հնարավորություն,

■ յուրաքանչյուրին հասանելի կլինի որակյալ առողջապահությունը՝ մեկ անձի համար տարեկան առողջապահական ծախսը կհասցվի նվազագույնը 150.000 դրամի (այժմ չի գերազանցում 63.000 դրամը),

■ յուրաքանչյուր տարի 5000-6000 կարիքավոր ընտանիք կապահովվի սոցիալական բնակարանով,

■ առաջիկա 5 տարիներին կզսպվեն գազի, էլեկտրաէներգիայի, ռռոգման և խմելու ջրի սակագները, անապահով խավի համար հետագա ցանկացած փոփոխություն կկապակցվի նրա եկամուտների հետ,

■ տնտեսության, աշխատաշուկայի և գիտության պահանջներին համապատասխան՝ միջին մասնագիտական և բարձրագույն կրթությունը, ինչպես նաև նախադպրոցական և հանրակրթական հաստատությունները ամբողջությամբ կլինեն անվճար,

■ յուրաքանչյուր երիտասարդ կկարողանա լիարժեք ինքնադրսևորվել, կունենա որակյալ կրթություն ստանալու, ստեղծագործելու, աշխատելու, բիզնեսով զբաղվելու երաշխավորված հնարավորություն,

■ 20.000-60.000 դրամ ամենամսյա տարբերակված նպաստ կտրամադրվի մինչև 7 տարեկան յուրաքանչյուր երեխայի, իսկ 5 և ավելի երեխա ունեցող ընտանիքներին՝ նաև անվճար բնակարան,

■ Ժողովրդագրական ակտիվ քաղաքականության շնորհիվ Հայաստանի բնակչությունը տարեկան միջինը կաճի 50.000-ով,

■ շեշտակի կաճեն ներդրումները գիտության և մշակույթի ոլորտներում: Մշակութային քաղաքականությունը կհամարվի երկրում իրականացվող բարեփոխումների, բարոյահոգեբանական մթնոլորտի առողջացման նախապայման, կընդլայնվի աշխարհին հայկական մշակույթի ներկայացվածությունը:

Ձևավորել կայուն զարգացող, մրցունակ տնտեսություն

■ Պետությունը պասսիվ բարեփոխիչից կվերածվի երկրի կայուն զարգացման մասնակցի և պատասխանատուի,

■ կբացառվի սեփականության իրավունքի ոտնահարումը, կձևավորվի տնտեսության ազատ մրցակցային միջավայր,

■ կգործադրվի արդար բաշխում ապահովող պրոգրեսիվ եկամտահարկի, գերշահույթի, ճոխության ու գերհարստության հարկման լիարժեք համակարգ,

■ կիրականացվի տնտեսության դիվերսիֆիկացիային, տնտեսական աճին և տեղական արտադրության հզորացմանը միտված դրամավարկային և բյուջետային քաղաքականություն,

■ սփյուռքի և անդրազգային ընկերությունների ներդրումները կներգրավվեն հատկապես հեռանկարային ինովացիոն նախագծերում և բարձր տեխնոլոգիական արտադրությունում,

■ կվերագործարկվեն և կստեղծվեն խոշոր, կենցաղային և նուրբ օրգանական քիմիայի արդիական ձեռնարկություններ,

■ երկրի պարենային անվտանգությունը ապահովելու նպատակով՝ կգործադրվի գյուղատնտեսության պետական աջակցության սուբսիդիաների, դոտացիաների և արտոնությունների տրամադրման ամբողջական համակարգ՝ գյուղատնտեսության տարեկան բյուջետային աջակցությունը հասցնելով 60 միլիարդ դրամի (այժմ չի գերազանցում 15 միլիարդը),

■ մարզերի զարգացումը կիրականացվի տարաբնակեցման հայեցակարգի հիման վրա՝ բազմակենտրոն և հավասարաչափ,

■ տնտեսական նախագծերը կիրականացվեն բացառապես շրջակա միջավայրի վրա դրանց ազդեցության փորձաքննության արդյունքների հիման վրա, հանրային շահի լիարժեք հաշվառմամբ: Երևանի կենտրոնում կարգելվի բնակարանային շինարարությունը, իսկ կանաչ տարածքներն ու ջրային մակերեսները կեռապատկվեն:

Կառուցել ժամանակակից ազգային-ժողովրդավարական պետություն

■ Կիրականացվեն սահմանադրական փոփոխություններ՝ ուղղված խորհրդարանական կառավարման համակարգի, Հայաստանի վարչատարածքային նոր բաժանման, ԱԺ պատգամավորների թվի կրճատման, մարզպետների ընտրության, ինչպես նաև դատական համակարգի իրական անկախությունը ապահովող մեխանիզմների ամրագրմանը,

■ արմատախիլ կարվի իշխանության վերարտադրման ոչ ժողովրդավարական համակարգը, կհաստատվի իշխանափոխության հնարավորություն ապահովող ամբողջական ընտրական համակարգ,

■ կձևավորվի իշխանություն-ընդդիմություն միասնական քաղաքական համակարգ, ազդեցիկ լծակներ կտրամադրվեն քաղաքական ընդդիմությանը՝ իշխանություններին վերահսկելու, զսպելու և հակակոռուպցիոն իրական պայքար ծավալելու նպատակով,

■ պետականորեն կամրապնդվի ու կընդլայնվի մասնակցային և անմիջական ժողովրդավարությունը,

■ կգործադրվի բացառապես անձի ունակությունների ու փորձի վրա հիմնված թափանցիկ կադրային քաղաքականություն,

■ կբացառվի պետական կառավարման և տեղական ինքնակառավարման գործում քաղաքական և տնտեսական գործառույթների զուգակցումը:

Հասցնել ներկա մարտահրավերներին համարժեք ազգային-պետական ուղեգիծ

■ Համաշխարհայնացման, արագ փոփոխվող ներկա աշխարհում երկրի առաջընթացն ու զարգացումը կիրականացվի բոլոր պետությունների հետ բարիդրացիական և փոխշահավետ հարաբերություններով՝ առանց զիջելու և վտանգելու համազգային ձեռքբերումները, նպատակներն ու շահերը,

■ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորումը կիրականացվի՝ չնահանջելով Արցախի ժողովրդի համաժողովրդական հանրաքվեներով արդեն իսկ արտահայտած կամքից,

■ ետ կկանչվի Հայաստանի ստորագրությունը հայ-թուրքական արձանագրություններից: Հայաստանի և Թուրքիայի հարաբերությունների կարգավորմանը չեն զոհաբերվի համազգային նպատակները, պատմական արդարության վերականգնման հեռանկարը,

■ պետության և համայն հայության ուժերով աջակցություն կցուցաբերվի Ջավախքի քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքների իրացմանը,

■ անհրաժեշտ քայլեր կկատարվեն Ադրբեջանին բռնակցված Նախիջևանի հայկական պատկանելիության գիտակցությունը մեր ժողովրդի մեջ վառ պահելու նպատակով,

■ կբարձրանա Հայաստանի անկախության և անվտանգության երաշխավոր հայոց ազգային բանակի մարտունակությունը, կարգապահությունը, արդիականությունը,

■ էապես կաճեն ազատամարտիկների և զինծառայողների ընտանիքների սոցիալական պայմանների բարելավմանն ուղղվող ֆինանսական միջոցները,

■ ՀՀ արտաքին քաղաքականության մեջ առաջնորդող սկզբունք կհամարվի այն, որ Հայոց պետականությունը ոչ միայն Հայաստանի քաղաքացիների, այլև համայն հայության ազգային նպատակների իրականացման երաշխավորն է: Ամեն ինչ կարվի սփյուռքահայությանը հայոց պետականության գործընթացում լիարժեք ներգրավելու համար: